

որին այնքան պէտք ունի սա: — Յաջողութիւն այս իմաստով «Արարատ»ի նոր տարեշրջանին՝ նորա նոր խմբագիրներին եւ աշխատակիցներին:

Կ. Վ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ

Վեհափառ Հայրապետը նոյեմբերի 1-ին, Կարսի երկաթուղու գեշերու այ զնացքով՝ մեկնեց Թիֆլիսից զէպի Աղէքսանդրապոլ, ուր երկու օր մնալուց յետոյ, Երեւանեան երկաթուղու նորահասոյց գծի վերայ առանձին զնացքով՝ նոյեմբեր 4-ին ժամանեց Մայր Աթոռ: Վարխուն կայարանի մօտ Ն. Վեհափառութեան ընդ առաջ էին ելել Մայր Աթոռի մարտնեցից Գեր. Յովհաննէս եւ Ղեռնգ եպիսկոպոսները, Արժ. Բաղարատ Գ. Թաւաքալեան, Մխիթար, Կարապետ, Յուսիկ եւ Եղնիկ վարդապետները:

Տիֆլիսից եւ Աղէքսանդրապոլից Նորին Վեհափառութեան ուղեկցում էին՝ Տ. Սահակ եւ Տ. Գարեգին եպիսկոպոսներ, Տ. Սահակ Բաղասարեան, Տ. Կիւրեղ, Տ. Տիրայր, Տ. Կորիւն եւ Տ. Մատթէոս վարդապետներ:

Նորին Վեհափառութեան հեռուորդներէր Գեր. Գարեգին եպիսկոպոս եւ Տ. Կիւրեղ վարդապետ մի քանի օր յետոյ վերագարձան իրենց պաշտօնատեղիները (Սանահին եւ Կարս). Տ. Սահակ վարդապետ Բաղասարեան նշանակուեցաւ վանահայր Ագուլեաց ս. Թովմա առաքելոյ վանքի եւ վերահսկող շրջակայքի ուխտատեղեաց, եւ զնաց Վ. Ագուլիս. Տ. Տիրայր վարդապետ Աղէքսանդրապոլի լիճակի փոխանորդ կարգուեց, ուր եւ զիմեց նոյեմբերի վերջին. Գեր. Սահակ եպիսկոպոս Այվատեան արքեպիսկոպոսութեան բարձր աստիճան ստացաւ եւ նշանակուելով Պարսկաստանի եւ Հնդկաստանի առաջնորդ՝ մեկնեց զէպի Թեհրան:

Տ. Մեսրոպ վարդապետ, Մ. Աթոռի մատենագարանում իւր շարադրութեան համար հարկաւոր նիւթերը ժողովուրդ յետոյ՝ ուղեորուեցաւ զէպի Ս. Պետրուրդ, մտախ-

արտութեան աստիճան ստանալու համար:

Կարճ ժամանակով Մ. Աթոռ եկան Բագուի եկեղեցեաց գործակալ Տ. Աբսէն վարդապետ եւ Սպահանի առաջն. փոխանորդ Տ. Բաղարատ վարդապետ Վարդապարեան: Տ. Աբսէն վարդապետ վերագարձաւ Բագու, իսկ Տ. Բաղարատ վարդ. պաշտօնական գործով Մոսկուա զնաց, որտեղից վերագաւնալով պէտք է երթայ կրկին իւր պաշտօնատեղին:

Մ. Աթոռ եկաւ նաև Ն. Բայաղիսի եւ Գարաշիշաղի գործակալ Տ. Թովմա վարդապետ, որ Ղլարի առաջն. փոխանորդ կարգուելով՝ զնաց այս նոր պաշտօնին:

Իսկ փոխարէնը Մուրադբէկեան Աղէքսանդր սարկաւազ՝ Սեանայ վանքը զնալով եւ Գեր. Սարգիս եպիսկոպոսից կուսակրօն քահանայ ձեռնադրուելով, Ն. Բայաղիսի գործակալ է նշանակուել:

Մ. Աթոռի տպարանի տեսուչ եւ ձեւարանի ուսուցիչ Տ. Եղնիկ վարդապետ հրաման ստացաւ նոյեմբեր ամին Նորին Վեհափառութիւնից երկու շաբաթով Թիֆլիս զնալու եւ լուրջիմ զնելու աստուածաշունչի համար, որի տպագրութիւնը շուտով պէտք է ձեռնարկուի:

Երեք տարի Խարկովում իրաւարանութեան գասախօսութիւններ լսելուց եւ նոյն տեղում գանուած հայերին հովուելուց յետոյ Մ. Աթոռ վերագարձաւ Տ. Բարդէն վարդապետ:

Վերագարձաւ նաև Շնորհ. Կոստանդին սարկաւազ, որ խոչընդոտներին հանդիպեց՝ Մոսկուայի Գիւղասնատեան ինստիտուտը մանկ կամենալով:

Վերագարձան՝ Գեր. Յուսիկ եպիսկոպոս, որ Վեհափառ Հայրապետի առանձին յանձնարարութիւններով Մոսկուա էր զնացել, եւ Տ. Հմայեակ վարդ. Արշարունի, որին Տիֆլիսի Գասաստ. պալատը արդարացրեց նորա վերայ բարդուած մեղադրանքներէր:

Գեկա. 19 Մ. Աթոռ ժամանեց Գեր. Գեորգ արքեպիսկոպոս Սուրենեան: Նորին Բ. Սրբալիութեան ընդառաջ էին զնացել Ղարխուն կայարանը Տ. Բաղարատ վարդ. Գ. Թաւաքալեան եւ Տ. Կորիւն վարդապետ:

Ս. Ստեփաննոսի ամին Վեհափառ Հայ-

բազմաթիւ հրամանաւ ուրաք ստացան ձեւաբանի Վ. լսարանի ուսանող Նիկողոսյան Քիւր-գեան Աքքրիմանցի և Բ. լսարանի ուսանող Միկայիլ Մեկքոնեան զանեցի ու Յարութիւն Արամեան Ն. Նախիջևանի Թոփաի զիւղից:— Աէաք է նկատել, որ ինչպէս Ս. Ստեփաննոսի այնպէս և միւս աւագ տոներն ու եկեղ. հանդէսները առանձին զոյնչութեամբ կատարուեցան այս տարին շնորհիւ այն բարեգործական և կարգ ու կանոնի որ մտել ու աւելացել է Մայր սամարի մէջ Գեր. Աննդ կախիկոսի աւագ լուսարար կարգուելու օրից: Աւելացել են նաև սամարի հանդէսներն ու սոցաները որոնց համար զովելի նախանձախնդրութեամբ զիմուսներ է անում և հեռու մտովի նուիրատուներ դնում Գեր. Աննդ կախիկոսի:

Արնոյ սոսկալի երկրաշարժի լուրն անելով՝ Նորին Ա. հասարակութիւնը անօրինեց անմիջապէս հազար բուլլի ուղարկել Մ. Ա. Թոփաի գանձարանից ի նպաստ վասնգեղաների:

Ն. Ա. հասարակութիւնը բարեհաճեց ներկայ դնուել ս. Թադէոս և ս. Բարդուղիմիոս առաքելայնորի տոնի երկերեան ձեւաբանում կազմած գրական հանդիսին կարգաւ սուրբերի յիշատակին նուիրած Խրքերթումաձը և Իւր հայրական խրատներն ու յորդորները ապ ուսանող մանկուոյն:

ՏԱԿԱՆԱԿ

Երզրումի երկրաշարժը. — Հոկտ. 26-ին ուրբաթ օրը Երզրումի մէջ երկրաշարժ եղաւ որի զօրաւոր ցնցումները բաւական ծանր վնասներ պատճառած են: Բազմաթիւ տուներ փլեր կամ ծանրապէս վնասուեր են: Արտուի թէ մեռեալներուն և վերաօրեակներուն թիւը 20-ի կը հասնի: Եկեղեցիներ ալ վնասուած են բաւական ծանր կերպով: Ժողովուրդը վրաններու տակ հաստատուեր է: Նահանգին նորընտիր կուսակալ Նազար մէյ վնասուողներուն այցելելով զանոնք հանգարակեցուցեր է: Ժողովուրդը վախէն իր բնակա-

րանները չէ մտէր: Նոր ցնցումներու մտածումն իսկ սարսափելով:

Երկրաշարժը նախապէս կարծուածէն աւելի մեծ վնասներու օղբի տուած է, մանաւանդ երբ նկատողութեան առնելը եղաւ նախն խտուածները քանի որ շատերը հարկադրուած են իրենց տունը տեղը թողուլ և վրաններու տակ ապաստանել: Եղած վնասները անմիջապէս դարմանել կարելի չէ հարկաւ. սակայն հնար եղածին շտի գարման մը ըլլալու համար կուսակալ Ասեմ. Նազար մէյ իր նախագահութեան տակ յանձնաժողով մը կազմել է: որուն կը մասնակցի նաև առաջնօրը Չաւէն Ծ. Ա. և անմիջապէս հանգանակութիւն կատարուելով 500 սոկի շտի դուար մը հաւարուեր է: Միւս կողմէ կուսակալը մեծապէս հոգ կը տանի որ արկածելաց ինչքերը ապահովուին և վնասուած շէնքերու մէջ բնակութիւն չհաստատուի: Պատրիարքարանի մէջ յանձնաժողով մը կազմուեցաւ որուն անդամ ընտրուած են Տիգրան էֆ. Տէր-Ներսիսեան, Գանիէլ էֆ. Հանէսեան, Կարապետ էֆ. Խերպիկեան և Գարեգին էֆ. Ազամեան: Ս. Պատրիարքը 10 սոկի տուած և կոնդակ մըն ալ յանձնած է յանձնաժողովայ որուն մէջ խօսելով պէտքէն կարեւորութեան վրայ կ'աւելցնէ. «Սիրելիք, գուք որ առէն կարօտութեան միջոց նպաստ չէք զլացած, փութացէք այդ առթիւ ալ ցուցնել 2եր սերը, 2եր գութը, և նպաստել, ու ողորմելով յայտնեցէք և վկայեցէք 2եր պարտուց կատարմանը համար ունեցած փոյթներնդ»:

— Երզրումէն Չաւէն Ծ. Ա. Նոյեմբեր 3 թուականով գրած է Պատրիարքարան թէ երկրաշարժի ցնցումները կը շարունակեն դեռ. խիստ ձմեռ մը կ'ընէ, կրկնապատկելով աղբաւ ժողովրդեան թշուառութիւնը: Ժողովուրդը դեռ իր տունները չէ գարձած. խանութները դոյ կը մնան դեռ: միայն կառավարութեան յորդորմամբ փուռերն ու մասվածաւները բաց են, ժողովրդին հաց և միս հայթայթելու համար: Ժողովրդին սնունդ հայթայթելու համար կազմուած յանձնաժողովը ամէն միջոց ու ջանք ի գործ կը դնէ օրը օրին ապրող ժողովրդին հաց, կերակուր, շաքար, թէյ և մսակիք հասցնելու: Տեղական իշխանութիւնը փութով կը շարունակէ հանդանակութիւնը բազմաթիւ բարեկեցիկ զատակարգին մէջ, որ մինչև 1000 սոկոյ հասած է: Այս հանգանակութեան հոյ բարեկեցիկ զատակարգն ալ բաւական նշանակելի մասնակցութիւն մը ունեցած է: Տեղական կառավարութիւնը ամէն ազգէ ու կրօնքէ արկածելոց անխախտ կարելի եղած նըպատանները կը հասցնէ: Օրտկան 800 օրտ հաց կը զրկուի միայն Հայոց Առաջնօրդարանը: Չաւէն Ա. յանուն արկածելոց իր խորին երախտա-